Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Տարբեր ինտերակտիվ մեթոդների արդյունավետությունը պատմության դասաժամերին սովորողների մոտ թեմայի յուրացման հարցում/ 8-րդ դասարան/
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Սոնա Հենրիկի Դանիելյան Պատմության ուսուցչուհի Հայոց պատմություն,Համաշխարհային պատմություն,Հայոց եկեղեցու պատմություն 6-9-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	«Վահան Տերյանի անվան հ.60 հիմնական դպրոց» ՊՈԱԿ /010/550070 teryan60@mail.ru yerevan60.schoolsite.am

Բովանդակություն

Ներածություն..... 3

Պարագրաֆներ/մասեր..... 5

Գրականության ակնարկ..... 5

Օգտագործված մեթոդները.....12

Եզրակացություններ, առաջարկություններ..... 16

Օգտագործված գրականության ցանկ..... 17

Հավելված 1 18

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Հետազոտական հարց** - Ո՞րքանով են արդյունավետ ուսումնառության մեթոդներից դերային խաղի և բանավեճի կիրառումը պատմության դասաժամերին սովորողների մոտ թեմայի յուրացման հարցում /8-րդ դասարան/ Հետազոտությունը անցկացրել եմ երկու զուգահեռ 8-րդ դասարաններում նույն թեման դասավանդելիս :Դասարաններից մեկում կիրառել եմ ուսումնառության մեթոդներից «Բանավեճ»-ը,մյուս դասարանում՝«Դերային խաղը»:Թեմայի ավարտին աշակերտներին տրվել է թեստ՝յուրացման մակարդակը ճշտելու համար : **Նպատակն է** պարզել,թե այդ մեթոդներից ո՞րն է ավելի արդյունավետ պատմության դասժամերին թեման ավելի լավ յուրացնելու համար :
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Ըստ Հանրակրթության պետական նոր չափորոշչի կրթության բովանդակության հիմքում դրված է կարողունակահեն մոտեցումը,ըստ որի ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել այնպես,որ ուսումնառության գործընթացում ձեռք բերված գիտելիքները ,ձևավորված կարողությունները ,հմտությունները ,արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում ,տարբեր իրավիճակներում սովորողները կարողանան արագ և արդյունավետ կողմնորոշվել ,արձագանքել ,առաջարկել համապատասխան լուծումներ :Ուսումնառության գործընթացում սովորողների մոտ վերոնշյալ կարողունակությունները կարող են ձևավորվել ու զարգանալ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի,գործունեության տեսակների ,մեթոդների կիրառման արդյունքում : Հետազոտությունները ցույց են տվել, որ Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10% Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20% Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30% Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք, հիշում եք 50% Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:

	Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ինտերակտիվ մեթոդների կիրառմանը: Եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է: Ինտերակտիվ մեթոդներից դերային խաղերի ընթացքում ձևավորված կարողունակությունները կարող են հաջողությամբ կիրառվել ուսուցման գործընթացում և առօրյա կյանքում :
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Ինտերակտիվ մեթոդները պատմության դասաժամերին կարող են նպաստել բազմաթիվ կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը ՝ լեզվական գրագիտություն և կարողունակություն, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, ինչպես նաև նպաստեն առարկայական չափորոշիչներով սահմանված ծրագրային բովանդակության համակարգված յուրացմանը:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ,մասեր

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից , ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:	**Դասավանդման ինտերակտիվ մեթոդների արդյունավետությունը պատմության դասաժամերին սովորողների մոտ թեմայի յուրացման հարցում** Ինտերակտիվ բառը («Inter» - փոխադարձ, «act»- գործել), նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ:Այս մեթոդները կիրառելիս ուսուցիչը ավելի հաճախ հանդես է գալիս միայն որպես ուսումնական գործընթացի կազմակերպիչ, խմբի ղեկավար, աշակերտի նախաձեռնության համար պայմաններ ստեղծող: Դասերը ինտերակտիվ մեթոդների օգնությամբ կազմակերպելիս սովորողների մոտ ձևավորվում են նոր գիտելիքներ, հմտություններ:: Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Կրթության ինտերակտիվ ձևերի խնդիրներն են. 1. սովորողների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրության արթնացումը 2.ուսումնական նյութի արդյունավետ յուրացումը. 3.սովորողների կողմից առաջադրված ուսումնական առաջադրանքի լուծման ուղիների ու տարբերակների ինքնուրույն որոնումը (առաջարկվող տարբերակներից մեկի ընտրությունը կամ սեփական տարբերակը գտնելն ու լուծումը հիմնավորելը); 4. երեխաների միջև համագործակցության հաստատումը, թիմում աշխատել սովորելը, ցանկացած տեսակետի նկատմամբ հանդուրժող լինելը, հարգել յուրաքանչյուրի խոսքի ազատության իրավունքը, հարգել նրա արժանապատվությունը. 5. Սովորողների կարծիքի և վերաբերմունքի ձևավորում. ./**Ուսուցման արդյունավետ հնարներ** / Ս. Խաչատրյան./- Եր.:Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020/ Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են. •փոխազդեցությունը, •փոխուսուցումը,

•Սովորողի ակտիվությունը,
•համագործակցությունը,
•ինքնարտահայտման խրախուսումը,
• հետադարձ կապը:

Ուսումնառության ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել հետևյալ ինտերակտիվ մեթոդները

1. Բանավեճ
2. Մտագրոհ (brainstorm, brainstorming);
3. Դերային խաղեր
4. Ինտերակտիվ շրջագայություն;
5. Նախագծային մեթոդ մեթոդ;
6. Սոկրատյան երկխոսություն;

/ **Л. П. Борзова** // Преподавание истории в школе. 2010/

Ինտերակտիվ դասերը պետք է ունենան աշխատանքի հետևյալ սկզբունքները..

1. Դասը դաս չէ, այլ ընդհանուր աշխատանք:
2. բոլոր մասնակիցները հավասար են՝ անկախ սեռից, սոցիալական կարգավիճակից, մտավոր կարողություններից:
3. Յուրաքանչյուր մասնակից ունի ցանկացած հարցի վերաբերյալ իր կարծիքի իրավունք:
4. Անհատին ուղղակի քննադատության չպետք է ենթարկել (միայն գաղափարը կարելի է քննադատել):

Կցանկանայի ավելի մանրամասն կանգ առնել աինտերակտիվ մեթոդներից երկուսի՝բանավեճի և դերային խաղի վրա ,քանի որ իմ հետազոտության ընթացքում կիրառել եմ այս երկու մեթոդները և կարծում եմ այս մեթոդների կիրառումը պատմության դասժամերին շատ արդյունավետ է:

Բանավեճ-բանավեճը ակտիվ ուսուցման մեթոդ է, ուսանողների ճանաչողական գործունեության կազմակերպչական ձևերից մեկը, որը թույլ է տալիս համախմբել նախկինում ստացած գիտելիքները, լրացնել բաց թողնված տեղեկատվությունը, ձևավորել խնդիրներ լուծելու կարողություն, ամրապնդել դիրքերը և սովորեցնել քննարկման մշակույթ: Այն որևէ մի կոնկրետ հիմնախնդրի խմբային քննարկում է, որի ընթացքում տեղի է ունենում գաղափարների, կարծիքների փոխանակում: Ուսումնական բանավեճի արդյունավետությունը պայմանավորված է հիմնախնդրի արդիականությամբ, ուսուցչի վարպետությամբ բանավեճի անցկացման հարցում, մասնակիցների տեղեկացվածությամբ:

Բանավեճի ընթացքում սովորողների մոտ ձևավորվում են մի շարք հմտություններ և կարողություններ ձևավորում.

•փաստարկների ձևակերպում և հիմնավորում, աջակցում
•ժխտող կողմի ռազմավարության կառուցում.
• հարցերը ճիշտ ձևակերպելու կարողություն;
• հռետորաբանության և տրամաբանության իմացության տիրապետում, դրանց կիրառումը գործնականում.

	• խմբում արդյունավետ աշխատանքի հմտությունների յուրացում. Բանավեճն անցկացվում է 3 փուլով. I փուլ-կողմնորոշման փուլ, մասնակիցներն ադապտացվում են միմյանց նկատմամբ, որը թույլ է տալիս ճիշտ ձևակերպել հիմնախնդիրը և նպատակը, ծանոթացնել բանավեճի անցկացման կանոնների և կանոնակարգի հետ: II փուլ-գնահատման փուլն է, մասնակիցների ելույթները, նրանց պատասխանների, մտքերի, առաջարկությունների քննարկումը: III փուլ-փոխհամաձայնության փուլ, որի ժամանակ վերլուծվում են ստացված արդյունքները, համաձայնեցվում են կարծիքները, դիրքորոշումները, համատեղ ձևակերպվում են որոշումները: Պատմության դասժամերին բանավեճի միջոցով սովորողը հնարավորություն է ունենում ոչ միայն խորությամբ քննել պատմական իրադարձությունները,այլև նոր գիտելիքներ ձեռք բերել, եզրահանգումներ անել, ամրապնդել իմացածը, խոսքի մշակույթը զարգացնել, ինչպես նաև զարգացնել իր մեջ սեփական կարծիքը պաշտպանելու կարողություն և այլն:Բանավեճի ժամանակ առաջ է քաշվում մեկ առանձին թեմա կամ հիմնահարց, և այն կառուցվում է որոշակիորեն սահմանված կարգով:Պատմության դասժամերին ուսումնասիրվող գրեթե ցանկացած պատմական իրադարձություն, անկասկած, կարող է բանավեճի թեմա դառնալ:Մինչ հիմնահարցի ձևակերպումը կարող են լինել կինոֆիլմի դիտում, ձայնագրության ունկնդրում կամ նյութի ցուցադրում: Այստեղ արդեն շատ է կարևորվում մեդիայի դերը: Ընդ որում ՏՀՏ միջոցների գործածությունը կարող է հենց ուղեկցել բանավեճին, դառնալ իբրև փաստարկ, ապացույց կամ հիմնավորում առաջադրված մտքի համար և նոր եզրահանգումների աղբյուր:Բանավեճը սկսելուց առաջ ուսուցիչը պետք է ստեղծի ուսումնական միջավայր և բարենպաստ հոգեբանական մթնոլորտ ապահովի, իսկ արդեն բանավեճի ընթացքում հետևի, որ այն վիճաբանության,լեզվակռվի չվերածվի, յուրաքանչյուր սովորող պետք է գիտենա, որ իր մասնակցությամբ բանավեճը պիտի հասցնի ակնկալված ավարտի՝ ճշմարտության բացահայտմանը: Մեր սովորողները հաճախ չունեն իրար լսելու, զիջելու բարեկրթությունը, ուսուցիչներիս խնդիրն է դառնում նաև այս կարևոր հատկանիշները նրանց մեջ սերմանելու, դաստիարակելու գործը: Ընդ որում դրա լավագույն օրինակը հենց ուսուցիչն է ցուցադրում: Երբ արդեն բանավեճը սկսված է, փորձառու ուսուցիչը պիտի նախընտրի չմիջամտել կամ շատ քիչ միջամտել սովորողների միջև ծավալվող հարց ու պատասխանին, կարծիքների ձևակերպմանը

/ **Короткова М.В.** Методика проведения игр и дискуссий на уроках истории. М., 2013./

Դերային խաղեր- Դերայի խաղերի կիրառումը պատմության դասաժամերին ևս շատ արդյունավետ է,դրանք նպաստում են սովորողների մայրենի լեզվով գրագետ հաղորդակցվելու,տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, ինքնադրսևորվելու, գործելու,գնահատելու,թիմային աշխատանքի հուզակամային որակների դրսևորման և հղկման,ինչպես նաև Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված սոցիալական բազմաթիվ կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:Դերայի խաղերի ընթացքում ձևավորված կարողունակությունները կարող են հաջողությամբ կիրառվել ուսուցման գործընթացում և առօրյա կյանքում:Դերային խաղի ընթացքում սովորողը ակտիվ փոխազդեցության մեջ է մտնում իր կողմից մարմնավորվող կերպարի հետ,ինչն էլ հնարավորություն է տալիս սեփական փորձառության միջոցով հասկանալ դրված խնդիրը,համակարգված գիտելիքներ ձեռք բերել ոչ միայն տվյալ գորխչիկիամ սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների,այլև ժամանակաշրջանի և կոնկրետ իրավիճակի վերաբերյալ: Կախված դրված նպատակից,մարմնավորելով իրենց հատկացված դերը՝սովորողը դերախաղի ժամանակ կարող է արտահայտել սեփական մոտեցումները,առաջարկել տարբեր լուծումներ,սեփական կարծիք ու տեսակետ ձևավորել:«Դերային ներկայացում» մեթոդի կիրառման համար ուսուցչից պահանջվում է լուրջ նախապատրաստական աշխատանք :Նա պետք է իրականացնի հետևյալ քայլերը.

1.Պատմական ժամանակաշրջանի ,իրադարձությունների ընտրություն.

Պետք է ընտրել այնպիսի թեմա,որը կընդգրկի պատմական կերպարներով և իրադարձություններով հարուստ ժամանակաշրջան և թույլ կտա բազմակողմանիորեն բացահայտել և վերլուծել ժամանակաշրջանի առանձնահատկությունները **2.Հիմնախնդրի կամ հիմնահարցի ձևակերպում**

Պետք է ընտրել այնպիսի հիմնախնդիր կամ ձևակերպել այնպիսի հիմնահարց ,որը թույլ կտա տարբեր դիրքերից ,տարբեր պատմական գործիչների և սեցիալական դերերի տեսանկյունից հանգամանորեն վերլուծել այն :

3.Դերային ներկայացման ուղղությունների սահմանում

Պետք է սահմանել այնպիսի ուղղություններ ,որոնք հնարավորություն կընձեռեն բացահայտել,թե բացահայտել ,թե ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ժամանակահատվածում,կոնկրետ իրավիճակում տվյալ պատմական կերպարները ինչ

նպատակներ,շահեր,ցանկություններ,զգացողություններ ունեն կամ ինչ անհաջողություններ ,սխալներ ,բացթողումներ են ունեցել :

4.Դերերի ցանկի կազմում

Չպետք է սահմանափակվել միայն հիմնական հայտնի գործիչներով ,անհրաժեշտ է տվյալ ժամանակաշրջանում մեծ դերակատարում ունեցող գործիչներից բացի դերերի ցանկում ընդգրկել սոցիալական տարբեր խավերի,սեռերի;բնագավառների մարդկանց:Դերերի ցանկում ընդգրկել ոչ միայն հայազգի գործիչների,այլև տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի վրա մեծ ազդեցություն ունեցած պատմական գործիչների:

5.Դերերի բաժանում սովորողներին

Կարելի է կատարել դերերի պատահական բաշխում՝ վիճակահանության միջոցով կամ դերերը բաժանել մասնակիցներին ըստ նրանց հետաքրքրասիրությունների, կարողությունների :Կարելի է ընտրությունը թողնել մասնակիցներին:

6.Գնահատման չափանիշների սահմանում

Գնահատման ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի բովանդակության համապատասխանությունը թեմային,խոսքի կիրթ և գրագետ ձևակերպումը,դերը սկսելու ,շարունակելու,տարբեր պատճառներով այն ընդհատվելու դեպքում այն կրկին շարունակելու ունակությունը,,դերային ներկայացման ընթացքում բարոյականության սկզբունքների և քաղաքավարության կանոնների պահպանումը:

7.Հնարավորության դեպքում դերերի հագուստին,կենցաղին բնորոշ տարբեր պարագաների,ինչպես նաև համապատասխան դիդակտիկ նյութերի ապահովում:

Ներկայացումն ավելի տպավորիչ դարձնելու համար ցանկալի է ,որ սովորողները կրեն տվյալ ժամանակաշրջանին բնորոշ հագուստներ,դասարանը կահավորված լինի ժամանակաշրջանին բնորոշ պարագաներով,,դերային ներկայացման ժամանակ հնչի համապատասխան ներկայացում ,դասարանում լինեն համապատասխան պաստառներ:

Պատմության ուսուցիչը կարող է «Տեխնոլոգիա» «Երաժշտություն» «Կերպարվեստ»առարկաների ուսուցիչների հետ կարող են իրականացնել հետաքրքիր նախագիծեր,որորնց ընթացքում հենց սովորողների կողմից կպատրաստվեն անհրաժեշտ պարագաները :

//Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն,Դերային ներկայացում մեթոդի կիրառումը դասի ընթացքում պատմական փաստերն ու իրադարձություններն ուսումնասիրելու և վերլուծելու համար ,Երևան 2022/

Դերային խաղի տեսակներից է **«Ո՞վ եմ ես» խաղը**: Պատմական որևէ կերպարի հագուստ հագած սովորողը

	խոսում է իր մասին,իսկ մյուս սովորողները կռահում են, թե ով է նա: Օրինակ՝ «Հին հույների կրոնը» թեման ուսումնասիրելիս - «Իմ շնորհիվ ամենամութ երեկոներին մարդկանց կացարանները լուսավորվեցին: Ես օգնեցի նրանց հաղթահարել ձմեռային ցուրտը: Ինչու՞ աստվածների արքան ինձ այդքան դաժան պատժեց» (Պրոմեթևս): Դերայի խաղի մյուս մեթոդը՝**Հարցազրույց պատմական անձի հետ**, խաղի ժամանակ սովորողները պետք է հարցազրույց բեմադրեն պատմական որևէ անձի հետ, դա կարող է լինել Տիգրան Մեծը,Վարդան Մամիկոնյանը,Լևոն Մեծագործը և այլք: Առաջադրանքը կատարում են երկու հոգի, որոնցից մեկը պատմական հերոս, իսկ մյուսը լրագրող: Օրինակ ՝ Հարցազրույց – սովորողները հարցեր են տալիս պատմական այլ դարաշրջանի ներկայացուցչին՝ հարցեր ասպետին. Որքա՞ն էր կշռում զրահը: Ի՞նչ է ստացել հաղթողը և այլն: Այսպիսով,ինտերակտիվ մեթոդների կիրառումը նպաստում է՝ ▪ Ուսումնական դրական խթանի ձևավորմանը, ▪Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը, ▪ Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավմանը, ▪Ինքնագործունեության խթանմանը, ▪ Ճանաչողական գործընթացների զարգացմանը՝խոսք,հիշողություն մտածողություն ▪ Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը, ▪ Ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը, ▪ Սովորողի անհատական հաղորդակցական ոլորտի զարգացմանը: ▪ Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացմանը: / Борзова Л. П. Игры при изучении нового материала на уроках истории,Москва 2013 /
Օգտագործված մեթոդները, գործիքները	**Հետազոտության ընթացքը** Հետազոտության ընթացքում կիրառվել են այնպիսի մեթոդներ ինչպիսիք են, աշակերտների թեստավորումը,զանգվածային հարցումը, որոնք թույլ են տվել ընդհանրացնել ստացված տեղեկատվությունը և համապատասխան եզրահանգումներ կատարել

	ուսումնասիրվող խնդրի շուրջ:Հետազոտությունը կատարվել է բնականոն ուսումնական միջավայրում՝ աշակերտների սովորական դասարանային պայմաններում «Հայոց պատմություն» առարկայի դասաժամերին: Հետազոտության և՛ սկզբում,և՛ վերջում կիրառվել է «Ձանգվածային հարցում» մեթոդը **/հարցաթերթերի օրինակը և հարցման արդյունքները հավելված 1-ում/**: ՈՒսումնասիրություն օբյեկտ են հանդիսացել երկու 8-րդ դասարանները, որտեղ էլ իրականացվել են հետազոտական դասաժամերը:Հետազոտության ավարտին երկու դասարաններում էլ տրվել են թեսթային աշխատանքներ `թեմայի յուրացման մակարդակը և տվյալ ինտերակտիվ մեթոդի դասավանդման արդյունավետությունը ստուգելու համար : Դասի թեման էր «Ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում» :Դասարաններից մեկում թեմայի շուրջ կազմակերպվեց բանավեճ,իսկ մյուսում`դերային խաղ : Առաջին դասարանում դասի ժամանակ դասարանը բաժանվեց երկու խմբի,յուրաքանչյուր խմբում 12 աշակերտ ,ուսուցիչը գրատախտակին գրեց բանավեճի հարցը –«Արդյո՞ք կարող էր ազատագրական պայքարը Սյունիքում և Արցախում ավարտվել հաջողությամբ» : Բանավեճը ընթացավ անկաշկանդ մթնոլորտում,ուսուցիչը և մյուս սովորողները անհարկի չմիջամտեցին,սովորողները հիմնվելով տվյալ թեմայի փաստերի,իրադարձությունների վրա տարբեր ուղղություններով վերլուծություններ արեցին և մեկնաբանեցին իրենց դիրքորոշումը : Երկու խմբում էլ բանավեճի սկզբում կային պասիվ աշակերտներ, որոնք սակայն ընթացքում աշխուժացան և նույնիսկ սկսեցին կարծիքներ հայտնել:Հաջորդ դասին տրվեց թեսթային աշխատանք`պարզելու արդյո՞ք բանավեճի մեթոդով դասը անցկացնելը օգնում է թեման ավելի լավ յուրացնել :Դասարանում սովորող 25 աշակերտներից 12-ը ստացան «լավ» ,9-ը `«բավարար»,իսկ 4-ը `անբավարար :



Մյուս դասարանում/30 աշակերտ/ դասը անցկացվեց դերային խաղի միջոցով:Մինչ այդ կատարվեցին նախապատրաստական աշխատանքներ :Հետազոտության ընթացքում կիրառվեց դերային խաղի **«Հարցազրույց պատմական անձի հետ»** մեթոդը

Նախապես բաշխվել էին դերերը ըստ աշակերտների կարողությունների `Եսայի Հասան-Ջալալյան, Վախթանգ 6-րդ, Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ,Տեր Ավետիս,Ավան և Թարխան հարյուրապետեր :Աշակերտների երկրորդ խումբը ստանձնեց հարցազրույցը վարողների դերը,երրորդ խումբը հանդես եկավ դիտորդի դերում,իսկ հարցազրույցից հետո ծավալվեց ակտիվ քննարկում:Այս մեթոդի կիրառման ժամանակ կարևոր է սովորողներին հնարավորություն ընձեռել արտահայտելու իրենց անհատական մեկնաբանություններն ու վերաբերմունքը պատմական գործիչների, սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների և նրանց գործնեության վերաբերյալ :Հարցազրույցները բոլոր վերոնշյալ պատմական անձանց հետ անցան անկաշկանդ մթնոլորտում,հնչեցին տվյալ ժամանակաշրջանին վերաբերվող բազմաբովանդակ հարցեր :Յուրաքանչյուր հարցազրույցի տրված էր հստակ ժամանակ :Դերային ամբողջ ներկայացման ժամանակ և՛ դերակատարները,և՛ հարցազրույցը վարողները,և՛ դիտորդները պահպանեցին բարոյականության սկզբունքները, քաղաքավարության կանոնները `պահպանեցին խոսելու հերթը,մինչև վերջ լսեցին մյուս դերակատարների խոսքը,չմիջամտեցին չծաղրեցին,չարհամարհեցին զրուցակցին:

Ինչպես ցանկացած ուսումնական գործընթաց ,դերային ներկայացման ավարտին իրականացվեց ամփոփում`համախմբային ամփոփման միջոցով :Քննարկման ժամանակ սովորողները անկախ իրենց կողմից մարմնավորվող դերերից,քննարկեցին հարցեր,որոնք կազմված էին ուսուցչի կողմից և որոնք

	հիմնականում ուղղված էին սովորողների վերաբերմունքի և արժեհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը /քննարկման հարցերը հավելված 1-ում/ Նման բնույթի հարցերը նպաստում են սովորողների համեմատելու, հակադրելու, վերլուծելու,կարծիք հայտնելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողությունների ձևավորմանը,ինչպես նաև օգնում են կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի և արդի իրողությունների ու իր կյանքի միջև : Իվերջո նման մեթոդով դասի վարումը օգնում է ավելի լավ յուրացնել թեման,քանի որ այս բազմաբովանդակ հարցերին պատասխանելու համար սովորողը նախ պետք է շատ լավ պատկերացնի տվյալ պատմական ժամանակաշրջանը,իմանա փաստերն ու իրադարձությունները : Հաջորդ դասի ընթացքում պարզելու համար թեմայի յուրացման մակարդակը տրվեց թեսթային աշխատանք ,որի արդյունքները ավելի գոհացուցիչ էին: Դասարանում սովորող 30 աշակերտներից 20-ը ստացան «լավ» ,8-ը `«բավարար»,իսկ 2-ը `անբավարար: 
Իրականացման ժամանակահատվածը	12.09-19.09
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	8-րդ դասարանների աշակերտներ /55 աշակերտ/

Եզրակացություն

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Եզրափակելով կցանկանայի նշել, որ պատմության դասավանդման պրակտիկայում ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ինտելեկտուալ ակտիվության բարձրացմանը: Նույնիսկ ամենապասիվ սովորողները մեծ ցանկությամբ ներգրավվում են ակտիվ գործունեության մեջ, նրանք զարգացնում են ինքնատիպ մտածողության հմտություններ, խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցում, այս ամենը նպաստում է դասերի արդյունավետությանը,օգնում է թեման ավելի լավ յուրացնեն:Ինտերակտիվ մեթոդներ կիրառելիս ուսուցիչը պատրաստի գիտելիք չի տալիս, այլ խրախուսում է սովորողներին ինքնուրույն որոնել: Համեմատած դասերի անցկացման ավանդական ձևերի, ինտերակտիվ ուսուցման մեջ փոխվում է ուսուցչի և աշակերտի փոխազդեցությունը. ուսուցչի գործունեությունը զիջում է սովորողների գործունեությանը, իսկ ուսուցչի խնդիրն է պայմաններ ստեղծել նրանց նախաձեռնության համար: Այսպիսով, ինտերակտիվ ուսուցման արդյունքում . -ներգրավված են գրեթե բոլոր սովորողները -տեղի է ունենում գիտելիքների, գաղափարների փոխանակում, ընդ որում՝ այն ընթանում է բարի կամքի մթնոլորտում

	-կա փոխադարձ աշակցություն, որը թույլ է տալիս ոչ միայն ստանալ նոր գիտելիքներ, այլ նաև զարգացնում է ինքնին ճանաչողական գործունեությունը: Հետազոտության ընթացքում նույն թեման ուսումնասիրելիս զուգահեռ դասարաններում իմ կողմից կիրառվեցին ինտերակտիվ ուսուցման ձևերից երկուսը՝**դերային խաղը** և **բանավեճը**:Նպատակն էր պարզել թե այս երկու մեթոդներից ո՞րի կիրառումն է ավելի շատ օգնում պատմական թեման յուրացնել: Հետազոտության վերջում տրված թեստային աշխատանքի արդյունքների ամփոփումից պարզ դարձավ,որ «Դերային խաղ» մեթոդի կիրառմամբ տվյալ դասարանում պատմական թեման յուրացնող աշակերտների թիվը ավելի գերակշռող էր :

Օգտագործված գրականության ցանկ

1.Л. П. Борзова // Преподавание истории в школе. 2010

2.Борцова Л.П. Игры на уроке истории. М.: Владос, 2011

3.Короткова М.В. Методика проведения игр и дискуссий на уроках истории. М., 2013.

4.Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն,Դերային ներկայացում մեթոդի կիրառումը դասի ընթացքում պատմական փաստերն ու իրադարձություններն ուսումնասիրելու և վերլուծելու համար ,Երևան 2022

5.**Ուսուցման արդյունավետ հնարներ** / Ս. Խաչատրյան./- Եր.:Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.

https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

Հավելված 1

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

8 գ

Հարցաթերթիկի օրինակ

/հետազոտության սկզբում /

1.Ի՞նչ ակնկալիքներ ունեք այսօրվա դասից

2.Ի՞նչ եք կարծում նմանատիպ դասերը կօգնե՞ն,որ թեման ավելի լավ յուրացնեք

3.Կցանկանա՞ք ավելի հաճախ նման դասեր անցկացնել :

8 գ

Արդյունքներ `Հարցվածների 50% այդքան էլ ակնկալիքներ չունեին ,գտնում էին որ պարզապես հետաքրքիր է նման դասերի անցկացումը,սակայն թեման յուրացնելու հարցում դժվար թե օգնի

30 % գտնում էր,որ շատ հավանական է ,որ ավելի լավ յուրացնեն թեման

20% ցանկանում էր հաճախ նմանատիպ դասեր անել



8 բ

Հարցվածների 60% այդքան էլ ակնկալիքներ չունեին ,գտնում էին որ պարզապես հետաքրքիր է նման դասերի անցկացումը,սակայն թեման յուրացնելու հարցում դժվար թե օգնի

20 % գտնում էր,որ շատ հավանական է ,որ ավելի լավ յուրացնեն թեման

20% հետաքրքրված չէին



Հարցաթերթիկի օրինակ

/հետազոտության վերջում/

1.Արդյո՞ք ձեր ակնկալիքները արդարացվեցին

2.Օգնե՞ց արդյոք այս դասը թեման ավելի լավ յուրացնել

3. . Որքանո՞վ էր հետաքրքիր այսօրվա դասը

8 գ

Արդյունքներ `60 % նշել է ,որ իրենց ակնկալիքներն արդարացվեցին և օգնեց թեման ավելի լավ յուրացնել

30 % գտնում էր ,որ դասը շատ հետաքրքիր էր

10 % հետաքրքրված չէր



8 բ

Արդյունքներ `40 % նշել է ,որ իրենց ակնկալիքներն արդարացվեցին և օգնեց թեման ավելի լավ յուրացնել

40% գտնում էր ,որ դասը շատ հետաքրքիր էր,բայց չօգնեց թեման յուրացնելուն

20 % հետաքրքրված չէր



Դերային խաղի ժամանակ տրված քննարկման հարցերը

-Քեզ դուր եկան 1727 թ Հալիձորի ճակատամարտի ժամանակ Դավիթ Բեկի կողմից առաջարկված լուծումները:

-Եթե դու լինեիր Մխիթար Սպարապետի փոխարեն ի՞նչ քայլեր կձեռնարկեիր:

-Ի՞նչ արդյունավետ լուծում կառաջարկեիր տեղեկանալով 1724,թ.ռուս-թուրքական համաձայնագրի մասին:

-18-րդ դարի ազատագրական պայքարի ո՞ր գործչին կուզեիր նմանվել և ինչու՞:

-Ի՞նչ կապեր ես տեսնում 18-րդ դարի իրադարձությունների ,իրավիճակի և արդի ժամանակաշրջանի գործընթացների միջև

ԷԼԱՅԻ ՀԱՍԱՆ
ՁԱԼԱԼՅԱՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սիրար Մուրուզ